



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«23» մայիս 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 16-Ա/Ք

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 14-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2013 թվականի մայիսի 21-ի «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 14-Ա/Ք հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԿԱՐԳ**  
**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ,**  
**ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ**  
**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի (այսուհետ՝ Կազմակերպություն) ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը:

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), սույն կարգի պահանջներին համապատասխան, կազմակերպում է Կազմակերպությունների կողմից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռքբերման նպատակով ներկայացված հայտերի (այսուհետև՝ Հայտ) ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Մրցույթի մասին հայտարարությունը հրապարակվում է Կոմիտեի պաշտոնական կայքում՝ Հայտեր ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն երեսուն օր առաջ:

3. Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում Հայտ՝ համաձայն հավելվածի:

4. Հայտերը գնահատելու համար Կոմիտեն ստեղծում է մրցութային (գնահատող) հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), հաստատում է Հանձնաժողովի աշխատակարգը:

5. Հայտերն անհրաժեշտության դեպքում վերադարձվում են լրամշակման, ապա՝ տրամադրվում Հանձնաժողովին:

6. Հայտում հիմնավորվում է տվյալ սարքի/սարքավորման անհրաժեշտությունը Կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար և տրվում են տեղեկություններ՝ Կազմակերպությունում սարքի/սարքավորման հետ աշխատանքի փորձ ունեցող մասնագետների առկայության մասին:

7. Հայտերի ընտրության ժամանակ նախապատվություն տրվում է այն Հայտին, որում.

1) գիտական սարքը/սարքավորումը առաջարկվում է մի քանի Կազմակերպությունների կողմից համատեղ օգտագործման համար,

2) առկա է (են) արտաբյուջետային միջոցների հաշվին համաֆինանսավորող կողմ (կողմեր)' ըստ համաֆինանսավորման համամասնությունների:

**8.** Համատեղ օգտագործման գիտական սարքի/սարքավորման ձեռքբերման համար Հայտ ներկայացնում է այն Կազմակերպությունը, որտեղ սարքը/սարքավորումը տեղակայվելու է: Հայտատու Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն I) կողմից ներկայացված Հայտին կցվում է առնվազն մեկ շահագրգիռ Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն II) հիմնավորումը՝ վերջինիս գիտական և գիտատեխնիկական գործունեության համար այդ սարքի/սարքավորման անհրաժեշտության մասին:

**9.** Հանձնաժողովի գնահատման արդյունքների հիման վրա կազմված Հայտերի վարկանիշային ցանկը ներկայացվում է Կոմիտեի նախագահին:

**10.** Հավասար միավորների դեպքում նախապատվություն տրվում է այն Հայտին, որում շահագրգիռ Կազմակերպությունների (Կազմակերպություն II, Կազմակերպություն III և այլն) թիվը, ինչպես նաև համաֆինանսավորման չափաբաժինը ավելի մեծ է, իսկ վերջիններիս հավասարության դեպքում, Հանձնաժողովը կազմակերպում է այց Կազմակերպություն I՝ տեղում ծանոթանալու դրա նյութատեխնիկական բազայի վիճակին և համապատասխան մասնագետների առկայությանը: Դրանից հետո միայն տրվում է համապատասխան եզրակացություն:

**11.** Կոմիտեի նախագահը, ելնելով տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար նախատեսված հատկացումների չափից, հաստատում է Մրցույթի արդյունքները:

**ՀԱՅՏ**  
**ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆՈԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ**  
**ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ**  
**ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ**

Հայտը հանձնված է «\_\_\_» \_\_\_\_\_ 20.. թ. Ծածկագիր՝ \_\_\_\_\_  
(ըստ վրձնի է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեում)

**Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ**

- Գիտական կազմակերպության
  - լրիվ և կրճատ անվանումը
  - հասցեն
  - հեռախոսը
  - էլեկտրոնային փոստի հասցեն
  - ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)
- ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեից հայցվող ֆինանսական աջակցության չափը (հազար դրամ)
- Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը  
Ամսաթիվ

**ՏՎՅԱԼՆԵՐ**  
**ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ\***

1. Կազմակերպության

- լրիվ և կրճատ անվանումը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային փոստի հասցեն
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

2. Համաֆինանսավորման չափը (հազար դրամ)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ամսաթիվ

---

\* Ըրացվում է՝ եթե կա համաֆինանսավորող կողմ

**ՏՎՅԱԼՆԵՐ**  
**ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ\***

Գիտական կազմակերպության

- լրիվ և կրճատ անվանումը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային փոստի հասցեն
- ղեկավարի (տնօրեն/ռեկտոր) Ա.Ա.Հ. (լրիվ)

Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Ամսաթիվ

---

\* Լրացվում է յուրաքանչյուր շահագրգիռ կազմակերպության համար առանձին

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՓՈՐՁ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ներառված մասնագետների				
ազգանունը, անունը, հայրանունը	մղստճում	մոտոցիտոտ գիտական աստիճանը	աշխատանքային փորձը	
			վերջին մոտոցիտոտ գիտական աստիճանը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը / վերապատրաստող կազմակերպությունը (գործունեության ոլորտը)
1	2	3	4	5

ՍԱՐՔԻ/ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ




# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ\*

---

\* Հիմնավորվում է գիտական սարքի/սարքավորման անհրաժեշտությունը կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեության համար (մինչև 3 էջ)